

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Պայմանավորված ընտրությունների ընթացքում և դրա արդյունքների ամփոփման ընթացքում տեղ գտած բացահայտ խախտումներով, թերություններով, անճշտություններով և կեղծիքներով՝ ցանկանում եմ ներկայացնել հատուկ կարծիք՝ ստորև շարադրվածի առնչությամբ:

Քվեարկության ընթացքում ընտրատարածք ներկայացած ընտրողին, ով, ի պաշտոնե, հանդիսանում է «Հայաստանի գործատուների հանրապետական միություն» կազմակերպության նախագահ, չի թույլատրվել մասնակցելու ընտրություններին, չնայած այն հանգամանքին, որ նա ընտրություններին մասնակցելու նպատակով հատուկ ժամանել էր արտասահմանից: Ընտրողին երկար չարչարելուց հետո ընտրական հանձնաժողովի որոշ անդամներ նրա փոխարեն ընտրատարածք են հրավիրել վկայակոչված կազմակերպության լիազոր ներկայացուցչին: Վերոնշյալի առնչությամբ ընտրական հանձնաժողովի կողմից թույլ է տրվել ոչ միայն «լիազորությունների չարաշահում», այլև անտեսվել է ընտրական հանձնաժողովի կողմից նախկինում կատարված քննարկումների արդյունքները, համաձայն որոնց՝ քվեարկությանը միայն ընտրող կազմակերպության լիազոր ներկայացուցչին թույլատրելն անհրավաչափ է, քանի որ կազմակերպության նախագահն, ի պաշտոնե, հանդիսանում է կազմակերպության օրինական ներկայացուցիչը /դա ֆիքսվում է կազմակերպության կանոնադրությամբ, ինչը հաստատվում է նաև այն փաստով, որ լիազորագիրը տրվել է հենց նույն իրավասու անձի՝ օրինական ներկայացուցչի կողմից/: Մոսկալին այն է, որ հանձնաժողովն այդ հարցի վերաբերյալ եկել է ընդհանուր միասնական դիրքորոշման, սակայն դա որևէ կերպ չի արձանագրվել ընտրական հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ դրսևորվելով որպես «ընտրական իրավախախտում-անգործություն»:

Հատկանշական է, որ նման առաջարկության հիմքը հանդիսացել է «ՀՄՀ-Հայաստան» հիմնադրամի Գլխավոր գործադիր տնօրենի պատասխանն՝ առ այն, որ ընտրական հանձնաժողովն իրավասու է կանոնակարգի դրույթների մեկնաբանություն կատարել՝ չշեղվելով դրա իմաստից և Կանոնակարգի ընդհանուր բովանդակությունից: Ըստ այդմ, հանձնաժողովը հավանություն էր տվել ներկայացուցիչների շարքում լիազոր ներկայացուցչից բացի նաև օրինական ներկայացուցիչ որպես ներկայացուցիչ-սուբյեկտ դիտարկելու գաղափարին:

Ս/թ մայիսի 18-ին կայացած ընտրական հանձնաժողովի նիստին մշակված օրակարգի նախագծի քննարկման ժամանակ ընտրական

հանձնաժողովի անդամ Լ. Քամայանն առաջարկեց օրակարգում մտցնել նաև կանոնակարգային մեկնաբանությունների և փոփոխությունների հարցը, ինչը ներառվեց առաջին հարցում: Սակայն, «ներկայացուցչին առնչվող հարցը» այդպես էլ քվեարկության չդրվեց հանձնաժողովի նախագահի կողմից, /իսկ այլ անձի կողմից քվեարկության դրվել չէր կարող, քանի որ դա նախագահի իրավասությունն է/, ուստի նախագահի անգործության հետևանքով խախտվել է ոչ միայն կանոնակարգային պահանջը, այլև՝ օրակարգը:

2. Համաձայն չլինելով քվեաթերթիկներում և ցուցակներում ներառված որոշ կեղծ և ոչ ճշմարտացի տվյալների հետ՝ ընտրական հանձնաժողովի անդամներ ներքոստորագրյալներս հրաժարվել ենք ստորագրել քվեաթերթիկների տակ, սակայն պարտաճանաչ ներկայացել ենք ընտրատարածք՝ ընտրությունների ամբողջ ընթացքում և դրա արդյունքների ամփոփման ամբողջ ընթացքում գտնվելով ընտրատարածքում: Ավելին, ներքոստորագրյալներս օժանդակել ենք ընտրությունների կազմակերպմանը՝ ընդունելով ընտրողներին, գրանցելով նրանց անձնագրային տվյալները, տրամադրելով քվեաթերթիկներ և բացել-փակելով քվեատուփը: Այդ փաստը կարող է հաստատվել «ՀՄՀ_Հայաստան» ծրագրի ներկայացուցիչների վկայությամբ, անկախ դիտորդների վկայությամբ, ինչպես նաև տեղում կատարված լուսանկարահանումներով:

Այս առնչությամբ ընտրական հանձնաժողովի նախագահի և քարտուղարի կողմից մեր հասցեին հնչեցվել են բացահայտ սպառնալիքներ՝ նպատակ ունենալով մեր կամքին հակառակ մեզ պարտադրաբար ստիպել ստորագրել և հաստատել քվեարկության արդյունքները:


Ավելին, ընտրական հանձնաժողովի անդամ Լ. Քամայանին հանձնաժողովի նախագահը գրկել է ձայնի իրավունքից՝ համարելով, որ նա նիստին ներկա չէ:

Ավելին, ընտրական հանձնաժողովի նախագահը հրաժարվել է ընդունել ընտրական հանձնաժողովի անդամ Ա. Բալաբեկյանի կողմից կողմից ներկայացվել է լիազորագիր, որն ընդհանրապես չի հետազոտվել նախագահի և ընտրական հանձնաժողովի անդամների կողմից՝ համարվելով գոյություն չունեցող:

3. Ընտրական հանձնաժողովի կողմից նախապես չի զգուշացվել այն հայտատուներին, որ իրենց հայտերն անվավեր են ճանաչվել, որպեսզի իրենք իզուր չներկայանան ընտրության:

4. Ընտրության արդյունքների հաշվարկումն ու ամփոփումն իրականացվել է առանց քվորումի ապահովման, քանի որ քվեարկությանը ներքոստորագրյալներս չենք մասնակցել:

Ճեպքապետ Կառնեմտադուրի
սեղան՝ ԱԼԵՃ Ճ. Բաժնապետ
22.05.2010թ.

 Ճ. Օ. Բաժնապետ
22.05.2010թ.

Ճեպքապետ Կառնեմտադուրի սեղան՝
Ս. Նիժնայսկա 22.05.2010



Ճեպքապետ Կառնեմտադուրի
սեղան՝ Ս. Բաժնապետից
Սեղան՝ Նիժնայսկա Ճ. Բաժնապետ
ԱԼԵՃ 22.05.2010թ.